ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14.1/[33695]-10
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010Թ. ՄԱՐՏԻ 29-ԻՆ ԺԱՄԸ 16.00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Դ. Սարգսյան	-ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Աշոտյան	-ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	-ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Կարապետյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Սիմոնյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Թոփչյան	-«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Քոչարյան	-Երևանի պետական համալսարանի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Գ. Մարգարով	-Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ա. Ղազարյան	-Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ա. Ղուկասյան	-Հայաստանի բանկերի միության նախագահ
Ժ. Կարաասլանյան	-«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Բ. Փափազյան	-Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2009 թ. գործունեության հաշվետվության և ընթացիկ խնդիրների մասին

(Ռ. Թոփչյան, Ա. Աշոտյան, Վ. Գաբրիելյան, Ա. Ղուկասյան, Բ. Փափազյան, Ա. Ղազարյան, Դ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Որոշվեց՝

1) հավանություն տալ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2009թ. գործունեության մասին հաշվետվությանը,

2) 2010թ. համար հիմնադրամի բյուջեն հաստատել 2009թ. չափով,

3) հավանություն տալ բուհերի հավատարմագրման նոր մեխանիզմին անցնելու անցումային տարբերակին,

4) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ռ. Թոփչյանին՝

ա. տասնօրյա ժամկետում ՀՀ կրթության և գիտության նախարարի հետ համաձայնեցնել հիմնադրամի 2010թ. ծրագիրը՝ դրանից հանելով ՀՀ կրթության և գիտության նախարարության իրավասության դրույթները,

բ. մեկամսյա ժամկետում շրջանառության մեջ դնել մասնագիտական կրթության որակի ապահովման 2010-15թթ. ռազմավարությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ